

"AYO" քարտերի սակագներ

1. Վճարային քարտերի սպասարկման ընթացքում ՀՀ դրամով դրամով արտահայտված վճարների մուտքագրումները և գանձումները իրականացվում են ՀՀ ԿԲ կողմից հայտարարված արժույթային շուկայում ձևավորված միջին փոխարժեքով:
- 2.Քարտային գործարքների նկատմամբ կիրառվում են «Քարտի տրամադրման և օգտագործման կանոններում» սահմանված փոխարժեքները, ընդ որում Visa համակարգի կողմից կիրառվող փոխարժեքը ներառում է նաև Բանկի 2% միջնորդավճարը:
3. Բանկային գործառնությունների կատարման հետ կապված փոստային, հեռագրային, հեռախոսային, տելեքսային և ֆաքսիմիլային կապի ծախսերը, ինչպես նաև երրորդ բանկի ծախսերը գանձվում են լրացուցիչ:
4. Բանկը կարող է գործող սակագներում կատարել փոփոխություններ և լրացումներ, որոնց մասին Բանկը ծանուցում է հաճախորդներին՝ փոփոխությունների և լրացումների տեքստը Բանկի տարածքում կամ Բանկի ինտերնետային կայքում հասանելի դարձնելու միջոցով: Փոփոխությունները և լրացումներն ուժի մեջ են մտնում Բանկի կողմից սահմանված պահից, բայց դրանց մասին հաճախորդներին ծանուցելու օրվանից ոչ շուտ:
5. Այն միջնորդավճարները, որոնք ենթակա են ԱԱՀ-ով հարկման, ներառում են նաև ԱԱՀ-ն:

N	Միջնորդավճար	AYO VISA Classic	AYO VISA Gold
	Քարտի արժույթ	ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար/Եվրո	ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար/Եվրո
1	Քարտի թողարկում	500	2000
2	Քարտի սպասարկում	600 դրամ ամսական/6,000 դրամ տարեկան	2,000 դրամ ամսական/ 20,000 դրամ տարեկան
3	Վարկային գիծ արտոնյալ ժամկետով	Համաձայն Բանկի ֆիզիկական անձանց վարկավորման պայմանների	Համաձայն Բանկի ֆիզիկական անձանց վարկավորման պայմանների
4	Հավելյալ քարտի թողարկում	անվճար	անվճար
5	Հավելյալ քարտի տարեկան սպասարկում	3,000	անվճար
6	Քարտային հաշվի նվազագույն մնացորդ	չի սահմանվում	չի սահմանվում
7	Քարտային հաշվի մնացորդի վրա հաշվարկվող տարեկան տոկոսադրույք	0%	0%
8	Քարտի տրամադրում մեկ բանկային օրվա ընթացքում ¹	3,000 դրամ	3,000 դրամ
9	Քարտի վերաթողարկում (քարտի կորստի, վնասման, հափշտակման, PIN-ի կորստի կամ երրորդ անձանց հայտնի դառնալու դեպքում)	3,000 դրամ	5,000 դրամ
10	Քարտի վերաթողարկում (քարտի ժամկետի լրացման, ՀՀ այլ բանկերի կողմից քարտի առգրավման դեպքում)	Անվճար	Անվճար
11	Վարկային սահմանաչափի շտապ ակտիվացում (սահմանաչափի հաստատումից առավելագույնը մեկ ժամվա ընթացքում)	2,000 դրամ	2,000 դրամ
12	Քարտի բլոկավորում	Անվճար	Անվճար
13	Քարտի ապաբլոկավորում	Անվճար	Անվճար
14	Քարտի պահում միջազգային STOP-ցուցակում /7 օրվա համար/ ²	9,000 դրամ	9,000 դրամ
15	Կանխիկի տրամադրման օրական գործարքների առավելագույն գումարը	1,000,000 դրամ/3,000 ԱՄՆ դոլար/3,000 Եվրո	2,000,000 դրամ/6,000 ԱՄՆ դոլար/6,000 Եվրո
16	Կանխիկի տրամադրման օրական գործարքների առավելագույն քանակը	5	5
17	Կանխիկի տրամադրում՝		
	ա) Ամերիաբանկի բանկոմատներում և կանխիկացման կետերում	3%	3%
	բ)Այլ բանկոմատներում և կանխիկացման կետերում	4%	4%
18	Ամերիաբանկի քարտերին կանխիկ միջոցների մուտքագրում Ամերիաբանկի կանխիկ միջոցների մուտքագրման սարքավորումների միջոցով	Անվճար	Անվճար
19	Ամերիաբանկի քարտերին կանխիկ միջոցների մուտքագրում այլ բանկերի կանխիկ միջոցների մուտքագրման սարքավորումների միջոցով	0.6%	0.6%
20	Առանց քարտի օգտագործման քարտային հաշվից կանխիկացում	17ա կետով սահմանված միջնորդավճար + 2,000 դրամ	17ա կետով սահմանված միջնորդավճար + 2,000 դրամ
21	Քարտով կատարվող անկանխիկ գործարքներ	Անվճար	Անվճար
22	Քարտից քարտ կատարվող փոխանցումներ (բանկոմատների և վիրտուալ քարտի միջոցով)	0.3%	0.3%

23	Առանց քարտի օգտագործման քարտային հաշիվներից կատարվող փոխանցումներ՝ այդ թվում քարտից քարտ փոխանցումներ (ներառյալ արժույթի փոխանակմամբ) բանկի տարածքային ստորաբաժանումներում ³	17ա ⁴ +Ամերիաբանկ ՓԲԸ Սակագների «4. Փոխանցումներ» գլխով նախատեսված տվյալ արժույթով փոխանցման համար սահմանված համապատասխան միջնորդավճար	
24	Քարտային հաշիվներից կատարվող փոխանցումներ՝ այդ թվում քարտից քարտ փոխանցումներ (ներառյալ արժույթի փոխանակմամբ) Ինտերնետ-Բանկինգ համակարգով	17ա ⁴ + Ամերիաբանկ ՓԲԸ Սակագների «4. Փոխանցումներ» գլխով նախատեսված տվյալ արժույթով փոխանցման համար սահմանված համապատասխան միջնորդավճար	
25	Քաղվածքի տրամադրում կամ ուղարկում էլ. փոստով	Անվճար	Անվճար
26	SMS հաղորդագրությունների ուղարկում (հաղորդագրություն ուղարկվում է 10,000 դրամ (համարժեք արտարժույթ) և ավելի գումարով գործարքների դեպքում)	Անվճար	Անվճար
27	Քարտով կատարված գործարքների բողոքարկման հայտ (գանձվում է միայն այն դեպքում, երբ բողոքարկման գործընթացի արդյունքում պարզվել է, որ գործարքը կատարվել է հաճախորդի կողմից կամ հաճախորդի կողմից քարտի օգտագործման կանոնների խախտման հետևանքով)	10,000 դրամ յուրաքանչյուր գործարքի համար ներառյալ ԱԱՀ	10,000 դրամ յուրաքանչյուր գործարքի համար ներառյալ ԱԱՀ
28	Քարտի առաքում		
	ա) ՀՀ և ԼՂՀ տարածքում	Անվճար	Անվճար
	բ)Արտերկիր	ըստ առաքման փաստացի ծախսի	ըստ առաքման փաստացի ծախսի
29	Հետվճարի (Cashback) տրամադրում	Հետվճարը (Cashback) տրամադրվում է AYO card ծրագրի գործընկեր առևտրի և սպասարկման կետերում կատարված անկանխիկ վճարումների համար: Հետվճար տրամադրող գործընկեր կազմակերպությունների ցանկը և համապատասխան հետվճարի չափերի մասին տեղեկատվությունը հրապարակվում է Բանկի ինտերնետային կայքում, ինչպես նաև AYO card ծրագրի ինտերնետային էջում:	

¹ Հայտը պետք է ներկայացված լինի մինչև տվյալ բանկային օրվա ժամը 14:00: Ծառայությունը գործում է բացառապես Բանկի Երևան քաղաքի գրասենյակներում քարտ պատվիրելիս:

²Քարտով առանց հավաստագրման գործառնությունների կասեցում ամբողջ աշխարհում

³ Կոմունալ վճարումները իրականացվում են առանց միջնորդավճարի:

⁴ Եթե հաճախորդի համար սահմանված կանխիկի տրամադրման միջնորդավճարը Ամերիաբանկի բանկոմատներում և կանխիկացման կետերում տարբերվում է 2 %-ից, ապա գործում է հաճախորդի համար սահմանված միջնորդավճարը: